

Անցեալ անգամ խօսելով մեծ յօբելեանների տօնակատարութեան մասին՝ խոստացել էի գրել նաև թէ ինչ դրութեան մէջ է դպրոցական ֆօնդի հարցը Աստրախանում:

Իսկապէս, երևի թէ զարմանալի կը թւայ ընթերցողներին, որ այնպիսի մի մեծ կուլտուրական քայլ, որպիսին հանդիսանում է ներկայումս համազգային մեծ յօբելեանները յաւերժացնող դպրոցական ֆօնդը, յօգուտ որի թէ քաղաքացի և թէ գիւղացի հայը չը խնայեց իր կօպէկը, որով «գևորվեցին բոլոր համարեա քաղաքները և գիւղերի հայ համայնքները»—ահա այդպիսի մի դէպքի առաջ Աստրախանը մինչև օրս դեռ չէ ասել իր խօսքը...

Աստրախանը ինչպէս միշտ, այժմ էլ շատ վաղուց պէտք էր ասէր իր խօսքը և այդ խօսքը պէտք է լինէր բովանդակալից և առաջնակարգներից մէկը...

Բայց այսօր Աստրախանը դպրոցական ֆօնդի առաջ ամօթալի է կանգնած. ամօթալի է, որովհետև մինչև օրս միայն գրօշներ է տուել...

Ահա գործի պատմութիւնը:

Դեռ անցեալ տարի, երբ թեմիս սրբազան առաջնորդը ստացաւ Նորին Վեհափառութեան այդ առիթով կօնգակը, իսկոյն ժողով գումարվեց, որի մէջ մանրամասն բացատրվելով դպրոցական ֆօնդի նշանակութիւնը, ընտրվեց մի բազմամարդ մասնաժողով քաղաքումս ժողովարարութեան գործը կազմակերպելու համար: Բայց որովհետև ընտրված անդամներից շատերը բացակայ էին այդ ժողովից՝ հէնց միւս օրվանից նրանք հրաժարվեցին և մասնաժողովը մնաց հինգ անդամով, որոնք էին՝ տիկին Ս. Մելիքեանցեան, տիկին Հ. Մազանդարանցեան, Գէորգ ք. Մկրտումեան, Ս. ք. Ասլանեան և Աղ. Թաւրիզեան: Այս մասնաժողովը սկսեց իր գործունէութիւնը, բայց աւաղ, այդ գործունէութիւնը շատ կարճ տևեց, որովհետև սրանցից երեքը հրաժարվեցին և գործը մնաց երկու քահանաների վրա...

Ժողովարարութիւնը մօտաւորապէս մինչև 1300 ր. հասցնելուց յետոյ՝ ամառվայ ամիսներում ընդհատվեց և մինչև օրս մնում է այդ դրութեան մէջ: Այդ գումարից 1000 ր. տեղափոխված է Սինօդին, իսկ մնացածը առ այժմ մնում է:

Բացի դրանից քաղաքիս Աղքատաց Հոգաբարձութիւնը որոշեց յատկացնել իր գումարներից 1000 ր., որը սակայն կարող է տրվել միայն ծխական ժողովի հաւանութիւնը ստանալուց յետոյ:

Գրօշներ ասացի. բայց միթէ 1300 ր. Աստրախանի ժողովրդի համար գրօշներ չե՞ն այնպիսի մի մեծ գործի առաջ, որպիսին դպրոցական ֆօնդն է հանդիսանում:

Աստրախանը, որ թէև կտրված է հայութեան կենտրոնից, բայց զանազան ժողովարարութիւնների ժամանակ միշտ արձագանք է տուել և առաջնակարգ դեր է խաղացել:

Անշուշտ պէտք է խտրութիւն դնել և գնահատելով հրապարակի վրա եղող հարցը, ըստ այնմ և նուիրաբերութիւն անել:

Բայց քանի դեռ ուշ չէ՝ աստրախանցիները կարող են ուղղել իրանց սխալը. ժողովարարութիւնը դեռ չէ փակված. ամեն տեղ դեռ շարունակվում է:

Թող աստրախանցին առաջ գայ ոչ թէ կօպէկներով, այլ հազարներով և համոզված լինի, որ իր հազարները կը ծառայեն լուսաւորութեան, քաղաքակրթութեան սուրբ գործին... Թող Աստրախանի հայ հարուստները իրանց հարազատները, բարեկամները սիրասուն գերեզմանները, նրանց յիշատակները յաւերժացնեն այնպիսի մեծ-յաւիտենական գործով, որ միայն լոյս կը բերի և այդ լուսաւորված երեխաների բերաններով կօրհնվեն թէ նուիրատուների և թէ նրանց հարազատների յիշատակը...

Այդպիսի գործերից մէկը հանդիսանում է ներկայումս և դպրոցական ֆօնդը:

Աստրախան

Ս. ք. Ասլանեան